ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ապրիլի 2015թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 101-Ա որոշմամբ, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող, Արցախի պողոտայի հ.հ. 34/4, 34/5 ,34/6, 34/7, 34/8, 34/9 և 34/10 հասցեներում գտնվող բնակելի տները և դրանց զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) այնտեղ բնակվող անձանց՝ համաձայն սույն որոշման անբաժանելի մաս կազմող հավելվածի։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան համայնքի սեփականություն համարվող Արցախի պողոտայի հ.հ. 34/4, 34/5, 34/6, 34/7, 34/8, 34/9 և 34/10 հասցեների բնակելի տներն այնտեղ բնակվող անձանց անհատույց օտարելու /նվիրելու/ հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» հ. 1522-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 10-ի «Գույք նվիրաբերելու, ամրացնելու, Հայաստանի Հանրապետության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի հ. 1522-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը գումար հատկացնելու մասին» հ.804-Ն որոշումները:

Հիմք ընդունելով վերը նշված որոշումները՝ Երևան քաղաքի ավագանին 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Գույք ընդունելու մասին» հ. 101-Ա որոշումով որպես նվիրատվություն ընդունել է Արցախի պողոտայի հ. 34/2 հասցեում գտնվող 408,34 քմ, 102,8 քմ, 100,8 քմ ընդհանուր մակերեսներով բնակելի տները և դրանց զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0,17136 հեկտար հողատարածքը՝ այնտեղ բնակվող անձանց սեփականության իրավունքով անհատույց հանձնելու նպատակով:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հ.հ. 05/13.1/6418-14, 01/13.1/8547 և Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 12.02.2015 թվականի հ.24/1-8/107/150 գրություններով ներկայացվել է քննարկվող բնակելի տներում փաստացի բնակվող անձանց ցանկը:

Արցախի պողոտայի հ. 34/2 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ կատարվել է իրավունքների պետական գրանցում Երևան համայնքի անվամբ, այնուհետև այն բաժանվել է յոթ առանձին գույքային միավորների՝ Արցախի պողոտայի հ.հ. 34/4, 34/5 ,34/6, 34/7, 34/8, 34/9 և 34/10:

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքները, ուստի ք. Երևան, Արցախի պողոտայի հ.հ. 34/4, 34/5 ,34/6, 34/7, 34/8, 34/9 և 34/10 հասցեներում գտնվող բնակելի տները և դրանց զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը սեփականության իրավունքով անհատույց օտարման համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակելի տներն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակելի տներն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի
ավագանու 2015 թ,
------ -ի N --- -Ա
որոշման

հ/հ	Նվիրառուների անուն, ազգանուն	Բնակելի տան հասցեն	Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը, հ.	Բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը (քմ)	Ընդհանուր համատեղ հողամասի մակերեսը (քմ)	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
1	Կոստանյան Շոթա Մնացականի,Կոստանյան Կարեն Շոթայի,Պետրոսյան Լիլիթ Ռուբիկի,Կոստանյան Անահիտ Կարենի, Կոստանյան Սարգիս Կարենի,Կոստանյան Մանե Կարենի	Արցախի պողոտայի հ.34/4	13112014-01-0181	284.21	102.8	
2	Մակվեցյան Ժորա Արամայիսի, Ներսեսյան Աիդա Արամի, Մակվեցյան Սամվել Ժորայի, Հարությունյան Վիկտորյա Անդրանիկի, Մակվեցյան Աիդա Սամվելի, Մակվեցյան Ժորա Սամվելի	Արցախի պողոտայի հ.34/5	13112014-01-0165	563.6	89.7	
3	Մակվեցյան Թամարա Ժորայի,Հովհաննիսյան Զոյա Համլետի, Հովհաննիսյան Էլեն Համլետի	Արցախի պողոտայի հ.34/6	13112014-01-0166	202.04 85.66(ընդհ.)	48.2	
4	Մակվեցյան Տիգրան Ժորայի, Ղուկասովա Վիոլետա Արամայիսի,Մակվեցյան Դավիթ Տիգրանի,Մակվեցյան Եվա Տիգրանի	Արցախի պողոտայի հ.34/7	13112014-01-0182	172.28 85.66(ընդհ.)	83.3	

5	Գրիգորյան Աշոտ Լյուդվիկի, Եսայան Անահիտ Սպարտակի,Գրիգորյան Գագիկ Աշոտի,Գրիգորյան Սոնա Աշոտի	Արցախի պողոտայի հ.34/8	13112014-01-0169	79.37 186.38(ընդհ.)	178.2	
6	Սարգսյան Սաթենիկ Պետրոսի	Արցախի պողոտայի հ.34/9	13112014-01-0173	74,57 23 186.38(ընդհ.)	77.7	
7	Ամիրխանյան Սաթենիկ Պողոսի	Արցախի պողոտայի հ.34/10	13112014-01-0176	42.49 186.38(ընդհ.)	30.3	